

Թիւրք իրանց, այսինքն բուն բնակիչների ձեռքում ամփոփելու համար:

Բայց մեզ կասեն, միթէ մի այդպիսի լայն ծրագիր կարող է իրագործել մի ժողովուրդ, որ ինքն շատ առաջ է գնացած պարսիկներէն, որն ունի բնականօրէն մի երկու խղճով՝ դարձող, մի երկու խղճով՝ ընթերցարան և զարգացման դեռ շատ ստոր աստիճանի վրա է կանգնած: Այդ մենք չենք մոռանում, բայց չը մոռանանք և այն, որ հայ ժողովուրդը, իբրեւ մի տարր՝ աւելի յարած քաղաքակրթութեան, աւելի նախաձեռնող ոգի ունեցող և աւելի ընդունակ կուլտուրայի, ստանալով իմպուլս՝ կովկասի հայերէնց, նորանց նիւթական և բարոյական գործակցութեամբ և աշակցութեամբ կարող է հեշտութեամբ իրագործել այդ նախազինը: Մեզ մօտ պարագայ մնացած երիտասարդ ոյժեր կարող էին գործունէութեան լայն հող գտնել պարսկահայերի մէջ, օգնելով նրանց գլուխ բերելու այդ քաղաքակրթական առաքելութիւնը:

Եւ այսպէս, արդիւնաբերական ձեռնարկութիւններէ հետ միասին բարոյապէս և մտաւորապէս զարգացնել պարսիկ տարրը՝ ահա Պարսկաստանի հայերի պարտաւորութիւնը և քաղաքակրթական պաշտօնը, կովկասի հայերի աշակցութեամբ: Այդպիսով հայերը նոյն իսկ իրանց համար մեծ ապագայ կը պատրաստեն և կը գրաւեն իրանի ժողովրդի սէրը և համակրութիւնը:

Մենք մի առանձին յօդուած կը նուիրենք այն հարցին, թէ այդ քաղաքակրթական միտքայում ինչ դեր կարող են կատարել հայոց լեռնական առաջնորդը և տեղական հոգեւորականութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՐ ԱՊՐՈՒՆՈՒ ԳՐՈՒՄԲԵՆԻ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» խմբագրութիւնը շատով կը ձեռնարկէ Գրիգոր Արծրունու գրուածքներէ հրատարակութեան, առանձին հատորներով:

Դա լոյս մեր ցանկութիւնը չէ, այլ գլխաւորապէս հատարակութեան ցանկութիւնը: Ցաղանդաւոր հրապարակախօսի մասին յետոյ, մենք մինչև այսօր էլ ստանում ենք շատ տեղերից բազմաթիւ առաջարկութիւններ այդ մասին, և հասարակութեան այդ ցանկութիւնը պարզ է դնում մեզ վրա՝ որքան կարելի է շուտով ձեռնարկել այդ թէն դժուար, բայց կարեւոր գործին:

Նման խօսքի մեծան հայ տար-

վայ փետրվարի 5-ին, Երուսաղէմից՝ մեր աշխատակից պ. Յ. Մարտիրոսին գրած մի նամակով, առաջարկում է դրել Գրիգոր Արծրունու մանրամասն կենսագրութիւնը, և առանձին հատորներով հրատարակել նրա քառամուտ գրական աշխատութիւնները:

«Եւ դուք և ձեր ընկերներ, — գրում է Հայրիկ, — որք «Մշակի» գրօշակին տակ զինուորով եք, որչափ քաղցր է ձեզ և Մշակ սիրող ժողովրդին, եթէ նոյն իսկ իւր հանձարի ծաղիկներ ժողովք և պսակ հիւսելով դնէք իւր գլուխը:

Հայրիկի առաջարկը՝ միջ համար ոգեւորութիւն է. հատարակութեան ցանկութիւնը՝ միջ համար պարտաւորութիւն:

Մենք կաշխատենք, որքան թոյլ կը տան միջոցները, արժանաւոր կերպով կատարել այդ պարտաւորութիւնը:

Ոչինչ միջոց չենք խնայել, որպէս զի Գրիգոր Արծրունու գրուածքները հրատարակվեն որքան կարելի է շուտ և քեզի, և մի և նոյն ժամանակ մաս առ մաս զին գիտի, որպէս զի իւրաքանչիւր հայ կարողանայ իր սիրտին վրա ունենալ անմոռանալի հրապարակախօսի գրաւոր աշխատութիւնները:

ԳԱՂՊԱԿԱՆ ՀԱՅՅՈՐ

Թիւրքիայից դադիող հայերի թիւը կարսի նահանգում հետզհետէ շատանում է: Կանաչի, գոլթի, պատուի անապատութիւնը ստիպում է տասնեակ ընտանիքներ լքել ինչ թողած՝ փախչել այս և ուրիշ սահմանակից նահանգները: Այդուստի միջոցից գրկված գաղթականները մի ողորմելի, սրտաճմլիկ դրութիւն են ներկայացնում: Այս կամ այն գիւղերում ցրված՝ նրանք ստիպված են մուրացկանութիւնով հայկաթել օրապահելը: Նրանց վրա աւելի են սարսափ է աղբւլ այն հանգամանքը, որ առհասարակ կարգադրութիւն է եղել գաղթականներին յետ ուղարկելու իրանց երկրները...

Հայաստանը — ինչպէս պատմում են այստեղից և կողմերից — ընտրվելով առատապէս օժտված այդ երկրներ, այսօր մի ողբալի տեսարան է ներկայացնում: Բարեբեկ դաշտերը մնացել են անմշակ, խոպան, որովհետեւ քրդերը կողոպտել են հայի անասունները, որովհետեւ հայը իր գիւղի մէջն են ապահով չէ քրդի աւարաւորութիւնից, իսկ դաշտը դիակ երկրներ մշակելու համար՝ նա հազիւ ուրեք հաւաքածակվում է: Անցնալիներ մի խումբ գաղթականներ, «ժամօթ» քրդերի առաջնորդութեամբ, անցնում են սահմանը, քրդերը նրանց մայքում են մի ձորի մէջ, փառաւորապէս կողոպտում, խլում են մի գեղեցիկ աղջիկ և հեռանում: Շտապով փախչելու ժամանակ թշուառ գաղթականները կորց-

նում են երեք երեխայի, որոնցից մէկի դիակն են գտնում կիսաուկիւ, իսկ միւսները անհետ կորչում են:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՄՑ

Նոյեմբերի 11-ին

Սարաւիկի հրեհը, որի մասին ձեռ հեռագրելից, սկսվել էր Արքամովիչի՝ անիւների իւղի գործարանից, որը տաս րօպէում արդէն ամբողջապէս բուցավառված էր. այդտեղից կրակն անցաւ Կրիսինի տակաւների գործարանը և այստեղից անմիջապէս Սեյադ Շահադեանի կերօսինի գործարանը:

Երբ հրեհը Արքամովիչի — Բիխովսկու և Շահադեանի գործարանները կրակելուց յետոյ մօտեցաւ «Վազատաֆ և Բլէյ» ընկերութեան իւղի տակաւներին և այդ 2,000-ի մօտ տակաւները սկսեցին արագել մէկը միւսի յետեւից, վառվող իւղը սկսեց դարձուելու ոյժով խուժել առուի մէջ և այդտեղից բոցավառված առաջ վազել. այդ արդէն մի այնպիսի րօպէ էր, երբ ամենքը գլուխները կորցրին: Հրեհէն դեռ անաշխատ էր ստակալ արագելութեամբ և ճանապարհին պատահածները՝ գործարան, պահեստ վառում էր մէկը միւսի յետեւից: Կէս ժամի մէջ արդէն բոցերի մէջ էին՝ հրէայ Ֆելդմանի գործարանը, Ժօլվէրի թիւրքումի մեծ պահեստը, Շիսանցի և Զուրաբեանի նաւթի պահեստները, և վերջապէս Անդե-նում և Ծովանովները գործարաններ, որի հետ կոչնչանային Մանթաշեանի և խաչատրեանների գործարանները, որոնք սեղծ կերպով կպած են միմեանց, եթէ միայն հրեհը կանգ չառնէր: Հիւսիսի էր բանտըները և գործակատարների այն քաջ և անվախ դիմադրութիւնը, որ նրանք ցոյց տուին այդ անխնայ թշնամու դէմ: Սակայն միւս կողմից քաղաքային հրեհաշիջչներ խուժը, իր անշնորհութեամբ, մի կատարեալ խայտառակութիւն էր ներկայացնում:

Կէս գիշերից անց սկսվեց սաստիկ փոթորիկ, որին հետեւեց հեղեղանման անձրեւ, և որը շարունակվեց անընդհատ, ամբողջ միւս օրը: Կրակը դեռ բողբոջվեց հանգած չէ. ահագին տարածութեան վրա, ուր երկու օր առաջ հարկաւոր մարդիկ բանում էին և ուր կանգնած էին տասնեակ գործարաններ, ներկայացնում է մի ողորմելի տեսարան: Այրված թիթեղի, երկաթի, և մեքենաների մնացորդներով:

Անցնե՛ք հրեհին միաներին. 1) Անգլիի դէսի գործարանը ունի ապահովութիւն 350,000 ռուբլու, սակայն վնասը շատ աւելի է. միմիայն 700,000 տախտակ է այրվել, որոնցից իւրաքանչիւրը — «Ո՛հ, էֆէնդի, ձեր անունը յայտնի է մեղ, կը դնաք մեր պաշտելի Հայրիկի քով. գիտե՛ք, այժմ հայկական խնդիր անոր չուրջ կը դառնայ. սուր թման կը վախնայ Պոսէն թողնել անցնելու: Առաջին անգամ էք այստեղ, անշուշտ գիտե՛ք, յուլիսի 15-ի դէպքն այստեղ եղաւ. Ալըգեան լաւ մը ծնծվեց»....

Գաւթում կանգնածները խեղ խեղ նայում են պարտի վրա.... Եւ հասկացայ. սա ևս Նաղմուկի կանգնածներին է, ուստի ահապարկից իւրաքանչիւրը գալ առանց պատասխանելու.... Հարցնում եմ՝ որտեղ է Պատրիարքարանը:

«Այն ձեր առաջ, ասում է մէկը, ցոյց տալով մի խարիւղ, փայտաշէն և հին տուն, եկեղեցու հանդէպ: Մի մեծ փայտեայ դուռ, վրան գտնված կիսալուսնաձև մի երկաթէ մեծ կիսապայտ, առանց որ և է արձանագրութեան: Այդ Պատրիարքարանի գլխաւոր դուռն է: Մտնում եմ այդ դռնով. երկու զավաղ կամ բարապան, գաւթում նստած, վայելում են նարգիլէ և սուրճ: Նրանցից միւրը մօտեւում է և խմանալով, որ կամենում եմ այցելել Պատրիարքարանը, առաջնորդում է ինձ:

Թիւրքիայի 3 միլիոն հայ ժողովրդի կենտրոնական վարչութեան հաստատութիւնը, հայոց Պատրիարքարանը բաղկացած է մի մեծ սրահից, կահաւորված եւրօպական կարասիքով և մի քանի սենեակներից, որոնք իբրեւ թէ կազմում են դիւանատուն խիսապէս դիւանատուն, այն մոլորով, որ մենք հասկանում ենք, չը կայ. ոչ կանոնաւոր գործակալութիւն, ոչ կանոնաւոր գործեր պահել, ոչ արխիւ, այլ մի երկու-երեք գրագիր, մի երկուսը մինչև անգամ գետնին ծալապատիկ նըս-

20 կօպէկ է նստած: 2) Սայադ Շահադեան, Մի տարի հաղու կը լինի, որ բաց է արել իր գործարանը, որը մի նշանաւոր արտասանութիւն չունէր: Պատրաստված ապրանքի համար, հրեհի առաւօտն արդէն թղթերը յանձնած է եղել ապահովագրող ընկերութեան ագենտին, որ 30,000-ի ապահովացնեն. սակայն մինչև թղթերի պատրաստվելը հրեհը սկսել է: Ունի ընդամենը 15,200 ռուբլու ապահովութիւն. իսկ վնասը աւելի է 35,000-ից: 3) Կրիսինի տակաւնի գործարան ապահովացրած է 10,000-ի, վնասը աւելի է:

Արքամովիչի իւղի գործարանը, որտեղի կրակը սկսվեց, ունի 35,000-ի ապահովութիւն, հաւաստացնում են որ վնասը քիչ է: 5) Ժօլվէրի վէրի պահեստը ունի 7,000 ռուբլու ապահովութիւն և ժամանակամիջոցը լրանում էր այդ մի և նոյն օրը ժամը 12-ին: 6) Բլէյ և Վազատաֆ ընկերութիւնը ունի 52,000-ի ապահովութիւն, վնասը 80,000-ից աւելի է: 7) Ֆելդմանի գործարանը ապահովութիւն ունի, բայց վնասը աւելի է: 8) Շիսանց և 9) Զուրաբեանի նաւթի պահեստներ ունեն, և ծախում են միայն խախտում. ունեն կարծեմ, 4,000-ի մօտ ապահովութիւն, միայն վնասները շատ աւելի են:

Բացի այդ վնաս կրեցին նաև Ծովանովները: Մանթաշեան, ամենաքիչը դուռ իւրաքանչիւրը 8—9 հազար ռուբլու. գործարանը երկու օր չը բանեց, և բանտները ստացան իրանց հասանելիները, բաւական ապրանք կորաւ և փչացաւ այդ խառն ժամանակը և բաւական կողմնակի ծախսեր արեցին: Պ. Ա. խօսքովիս, Ծովանեան եղբայրների գործարանի կառավարիչը, նուրբից իր բանտներին, բայց իրանց գործարանական օրաւարձից, նաև 200 ռուբլի, որը, ինչպէս լսեցի, բանտները դիտաւորութիւն ունեն գործածել որպէս հիմք իրանց համար խնայողական արդէ հիմնելու:

Մտաւորապէս բոլոր ապահովագրածների գումարն է մօտ 481,000 ռուբլու, մինչդեռ իսկական վնասը շատ աւելի է:

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՄՑ

Նոյեմբերի 14-ին

Երէկ թաղիկի թատրոնում կայացաւ մեր նոյնի դերասանական խմբի առաջին ներկայացումը: Ներկայացվին միջոց այն անթիւ Ֆրանսիական միօղրամներից, որոնց մէջ անվախաւոր են սուր, ատրճանակ, թոյն, միամտաբոլորներ, դրամայի հետ զուգընթաց կատակներ, ծիծաղ յարուցանող դարձուածներ և այլն, և որոնք վաղուց պէտք է արժանացած լինէին արխիվին:

Ոմանք նմադրում էին, որ մօտեքի կողմից ներկայացումը պէտք է անաջող լինի, որովհետեւ

տաճ, ծնկների վրա գրում են: Գործերի մի մասը, բացառեց ինձ մի պաշտօնեայ, Ղալաթայի խորհրդարանում է, մի մասն այստեղ: Ընթացիկ գործերը վարում է պատրիարքական փոխանորդ հայրը. պատրիարքը վաղուց է չէ իջնում Պատրիարքարան: Պաշտօնապէս նա հրամարված է, բայց իրը միջամտում է բոլոր գործերին: Նրա անունը կայ, ինքն չը կայ. կատարեալ խառն է տրուում Պատրիարքարանում:

Ինչնովի գաւթի, ևս նորից գրաւեցի խոժու զավաղի ուշադրութիւնը:

Յետոյ ինչպէս խմացայ, այդ զավաղը ամենազօրեղ մարդն է, մինչև այն աստիճան, որ նրան ոչ ոք չը համարձակվեց վաշտել, երբ նա ազգային հիւանդանոցից խաբէութեամբ հանկուղ մի դաւառացի երիտասարդ աղջկան, տանում ծախում է անաւականցներից միմում, որովհետեւ.... Նո Նաղմուկի գործակալն է....

Ծանր և ճնշող տպաւորութեան տակ դուր գալով Պատրիարքարանից, ևս փողոցում հանդիպեցի Գեորգ վարդապետ Երեկեանին, Բօլդարայի հայերի հոգեւոր պատգամաւոր՝ կաթողիկոսական ընտրութեան, որը հրաւիրեց ինձ մտնել պատրիարքարանին կից մի շինութիւն — Նրուսաղէմս տունը, ուր մնում է Երուսաղէմի պատրիարքի փոխանորդ Սիմէոն արքեպիսկոպոս Սեֆեդեանը, որ Պօլսի և Կիլիկիայի բոլոր ազգային գործերի մէջ այնքան մեծ դեր է խաղացել: Ուրախութեամբ մտայ այդ վանատունը, մանաւանդ որ Էջմիածնի վարդապետները այդտեղ էին իշխանած:

Հ. Առաքելեան

պէս նեղ, կեղտոտ, հոտած և խիտ բազմութեամբ լցված են:

Կամօլից անցնելիս յանկարծ դէմ առ դէմ պատահում եմ կաթողիկոսական պատգամաւորներից միին. դեռ ևս չէի կարողացել ողջունել, որ նա արագ մօտենալով ինձ, շնորհակցութիւն, շատ կը ցանկայի տեսակցել ձեզ հետ, բայց երկիւղ կը կրեմ, լրտեսները կարող են տեսնել և մասնակցել դիւ խօսքերը ասելով, շտապով հեռացաւ.... Ես ապշած մնացել էի. նոյն իսկ մի ակնհասոր հայ Պօլսում այժմ վարենում է տեսնվել իր օտարերկրացի մի ծանօթի, բարեկամի հետ: Ի՞նչ անի ինզդը. երկու ժամից յետոյ կը մատնվի Նաղմուկի բանտին....

Այստեղ պէտք է յիշեմ, որ Ղալաթայի կամըրջից է սկսվում շոգնաւորում և մակոյկներով երթնելութիւնը ու հաղորդակցութիւնը Միասութեայի կամ Պօլսի ասիական մասի և Ոսկեղջիւրի երկու ասիերի հետ: Ուստի զանազան շոգնաւորների նաւահանգիստները և կայարաններն այդ կամօլի երկու կողմն են հաստատված:

Վերջապէս կամօլից անցնելով դնում եմ Սիրիքէյի, որտեղ գտնվում է երկաթուղու կայարանը: Այդ երկաթուղու գիծը անցնում է Սիրիքէյից Եդի-գուլէ, Գում-գափու, Սամաթիա, Ետի-մահլէ, Մաքրիզիւղ և Ս. Ստեֆանօ թաղերը ու արուարձանները: Դրանք ամենախիտ թաղերն են, բնակված հայերով, յոյներով և տաճիկներով:

Այդ երկաթուղով պէտք է գնալ Եւրօպայ: Երկաթուղին գտնվում է աստրիկայիներէ ձեռքում, որոնք իրանց մաքրութեամբ և կարգերով տաճիկներից շատ էլ չեն առաջացել....

Գում-գափուի կայարանը հասնելով, իջնում եմ՝

և նրա առաջ գտնվող սրճատան նստած բազմութիւ հայերի միւսից հարցնում եմ Պատրիարքարանը և Մայր-Եկեղեցին տանող ճանապարհը: Նա ցոյց է տալիս. «Ձ», ասում է մինը իր ընկերներին, գուցէ դա էլ հրաւիրակներին հետ եկած է. նախ գլխուղ լաղ մը չը դաչ.... Կարձակ նոյն վաղը Նաղմուկի ճիւղներն ընկնելու: Հասնում եմ մի նեղ, շատ նեղ, կեղտոտ փողոցի բնարան. տարակուսում եմ, միթէ այս փողոցում կարող է լինել հայոց Պատրիարքարանը և Մայր-Եկեղեցին: Մի քանի քայլ անելուց յետոյ այդ փողոցով, որով երկու հազիւ հազիւ կարող են անցնել, հասնում եմ եկեղեցու առաջ: Դա Մայր-Եկեղեցին է, այստեղ, ուր թաղված են Յարութիւն ամիրա Պեղճեանը և Ներսէս պատրիարք վարժապետները: Եկեղեցին մեծ է, ընդարձակ, բաղկացած երեք մասից և նստարաններով: Պատարաքը նոր էր սկսվել, երեքհարկանի ներդաշնակ և կանոնաւոր: Փողոցի դրան կից մի փոքր սենեակում լուսարարը ծախում է մօմ. ամեն մանուղ չառնում է մի հատ, մտնում վառում պատկերի առաջ, մի ծուրը դնում և դուրս գալիս.... Ըստ մեծի մասին մշակներ են: Չը նայելով, որ այդ օրը մեռելոց է, ոչ ոք չը կայ բարձր հողերականութիւնից. երեւում է, որ ոչ ոք սիրտ չի անի նոյն իսկ մեռելոց օրը Ներսէսի գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարել.... Մօմ տեսնում եմ այդ գերեզմանին և համբուրում: Հազիւ դուրս եմ գալիս գաւթից, մի եւրօպական հաղուստով, չքեղ հագնված, ֆէսը գլխին հայ երիտասարդ մտնում է:

— Դուք պարոն... էք (տալիս է անուն):

— Այո, ինչ էք կամենում:

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 12.